

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅՆՐԱՆԻ ԴԱԿԱՆՆԵՐՔ ՓՈԽԱՌՅԱԼ ՏԱՐԵՐԻ
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՋՈՆ Ա. Կ. ԴՐԵՊԻՆ (ԱՄՆ)

Լեզվական նյութի վրա հիմնված այն հին տեսությունները, որոնք հայերենի համար առաջարկում էին փոյուդյան կամ նույնիսկ թրալյան ծագում, վաղուց ի վեր մերժվել են: Թրակերենը նշանակալիորեն տարբերվում է հայերենից իր հնչյունական համակարգով: Փոյուդերենը հայերենի հետ ընդհանուր ավելի շատ բան ունի, բայց հակառակ Գեորգիևի, Դրեսլերի և հատկապես Հասսի աշխատությունների, հայերենի և փոյուդերենի միջև ծագումնաբանական անմիջական ցեղակցություն կանխադրելու ոչ մի անառարկելի կրողն չկա:

Ավելին, այլևս չենք կարող ընդունել թրակա-փոյուդական նախնական միասնության տեսությունը, թեև երկու ժողովուրդներն էլ ունենին հնագիտական տվյալներով վկայված որոշ ընդհանուր սովորույթներ, բայց նախաբալկանյան լեզուների մնացուկների լեզվաբանական ուսումնասիրությունը մատնացույց է անում փոյուդերենի և թրակերենի բառապաշարային որոշակի տարբերությունների առկայությունը:

Վերջերս Կուրիլովիչը առաջ է քաշել «հարսի-հնդեվրոպական» լեզվախմբի վարկածը, որի մեջ են մտնում հայերենը, հունարենը, փոյուդերենը, թերևս նաև մակեդոներենը: Բալկանների մյուս լեզուները չեն ընդգրկվում: Հիմնված լինելով հնչյունական նմանությունների վրա, որոնք ընդգրկվում են պոթեթիկ ձայնավորի կիրառությունը և այլ կոկորդային երևույթներ, ինչպես նաև որոշակի ձևաբանական համապատասխանություններ, այս կոնցեպցիան թերևս որոշ արժեք ունի: Սակայն ընդհանրապես այդ տեսությունը ամբողջովին հայեցողական է:

Բայց, չնայած հնագիտական նյութի պակասին, լեզվական դորեզ փաստերը ցույց են տալիս, որ հայերը Անատոլիայում են եղել շատ հնում: Գ. Ղափանցյանի, Հ. Աճառյանի և Գ. Զահուկյանի, ինչպես նաև Մարտիրոսյանի և Մկրտչյանի աշխատություններում ներկայացված են դասական հայերենի խեթական փոխառությունների մի զգալի քանակ: Չնայած նշված հեղինակների աշխատությունները կարող են վիճելի լինել շատ հարցերում, բայց խեթական փոխառությունների առկայության միտքը արժանահավատ է թվում:

Հայ ժողովուրդը ցուցաբերել է վերապրելու և հարմարվելու մի զարմանալի ուժ: Երբեք մեծաքանակ չլինելով և գտնվելով տարբեր իշխող ցեղախմբերի ազդեցության տակ, նա կարողացել է պահել իր լեզուն: Սրա լավագույն վկայությունն է հնուց ի վեր հայերենում առկա խեթական, փրաևական, հունական և ասորական փոխառությունների բավական մեծ քանակը: Հայոց լեզուն հարմարեցնելու, նոր զաղափարների համար նոր բառեր գտնելու մեծ հնարավորություններ է ցուցաբերում: Նույն ձևով էլ հայ

ազգը, որպես ամբողջություն, կարողացել է հետևողականորեն պահպանել իր անփական սովորությունները նույնիսկ այն ժամանակ, երբ եղև է ավերի դորեզ օտար տիրապետության տակ: Ոչ մի պատճառ չունենք մտածելու, որ այդպես չի եղել նաև 3000 տարի առաջ:

Անհավանական չէ հայերենում դակյան փոխառությունների առկայությունը ևս: Հայտնի է, որ Բալկանների հին լեզուները մեզ ան հասել մնացուկների ձևով: Այն, ինչ մի ժամանակ կոչվում էր «թրակերեն», այժմ դիտվում է իբրև երկու տարբեր, բայց ցեղակից լեզուներ: Գեորգիևը¹ տալիս է այդ երկու փոքրուր-լեզվական ոլորտների հատակ աահմանազատումը: Թրակերենը խոսվել է Սև ծովի եզրերով Դանուբից հարավ, մինչդեռ դակերենը, որը ժամանակակից ռումիներենի նախորդն է, խոսվել է Դանուբից վեր: Դասական հեղինակների պնդումների կողքին կան նաև թրակերենը և դակերենը լեզվաբանորեն տարբերակելու այլ հիմունքներ: Թրակերենում կան մոտ 50 տեղանուն, որոնց վերջին բաղադրիչն է *-para*. Bessapara, Tranupara, Βλαδιπαρα, Κραταλπαρα. *-para* բաղադրիչով ոչ մի տեղանուն չկա Դանուբից հյուսիս: Նույն ձևով, կան *-bria* «քաղաք»-ով բաղադրյալ տեղանուններ, *-bria* ածանցը Թրակիայից դուրս գոյություն չունի: Գեորգիևն² այն ստուգաբանում է հետևյալ ձևով. հ.-հ. **wri(y)ā*, թուս. *rije*, Ա. *ri* «քաղաք», ավ. ՍՊԲ «ամբողջ, բերդ»: Վերջապես կան *-diza* «ամրոց»-ով բաղադրյալ տեղանուններ (հ.-հ. **dheig'h*-, հուն. *τείχος* «պատ», հայ. դիզանիմ «բարդել, դիզել»): Այս ածանցը գոյություն չունի ո՛չ Դակիայում, ո՛չ Միզիայում: Թրակյան անձնանունները նույնպես տարբերվում են դակերենից: *-ala*, *-ila* և *-ula* վերջավորությամբ անձնանունները հասուկ են Թրակիային:

Դակիայում, սակայն, *-dava* «քաղաք» ածանցն է տարածված: Կա մոտ 50 օրինակ, ինչպես՝ Burridava, Zermidava, Ζαρμίδαβα և Παμίδαβα. Թյուրկիայում միայն մեկ քաղաքի անուն կա *-dava* ածանցով՝ Pulpudeva. (այժմյան Պլովդիվը): Այսպիսով, թրակերենի և դակերենի տարբերակման համար կան անվանաբանական որոշակի տվյալներ: Բացի դրանից, կա նաև լրացուցիչ լեզվական նյութ: Այս լեզուների հնչյունային համակարգերը, չնայած երկուսն էլ ցուցաբերում են *satem* խմբի առանձնահատկություններ, ունեն նշանակալի տարբերություն: Թրակերենում խուլերը վեր են ածվում շնչեղ-խուլերի, այնինչ դակերենում պահպանվում է նախնական բաղաձայնական համակարգը: Հ.-հ. **g'h* և **g* դակերենում արտացոլվում են իբրև *d*, այնինչ թրակերենում սովորաբար վեր են ածվում *z*-ի: Այնուհետև, հ.-հ. ձայնավոր ձայնորդները թրակերենում արտացոլվում են իբրև *uo*, *um*, *ur* և *ul*, մինչդեռ դակերենում առկա են *ir* < **i* և *a* < **a* անցումները: Տարբերություններն ակնհայտ են նաև մաքուր ձայնավորների միջև, չնայած ձայնավորների ընձեռած նյութը հաճախ անորոշ է: Դակերենի և թրակերենի մեր ունեցած նյութը երբեմն քաղում ենք այդ լեզուներով եղած արձանագրություններից, բայց ավելի հաճախ՝ տեղանուններից, անձնանուններից, բուսական և կենդանական տերմիններից, որոնք մեզ են հասել հույն և հռոմեացի հեղինակների միջո-

¹ «The Earliest Ethnological Situation of the Balkan Peninsula as Evidenced by Linguistic and Onomastic Data», և H. Birnbaum, S. Vyrónis, Aspects of the Balkans, The Hague, 1972, p. 50—65.

² V. Georgiev, Introduzione alla storia delle lingue indoeuropee (այսուհետև՝ Introduzione), Rome, 1966, p. 176.

ցով: Բալկանյան այս երկու լեզուները, հավանաբար, հետևողականորեն և ճշգրտորեն չեն զբաղվել: Ավելին, դրանք ձևափոխվել են հունների ու հռոմեացիների հնչյունական ընկալմանը համապատասխան և դրություն տարբերությունները լեզվաբանական պատրաստություն չունեցող հեղինակների կողմից դիտվել են որպես անհամապատասխանություններ:

Թրակերենի և դակերենի ձայնավորների արտացոլման կայուն համապատասխանությունները հնարավոր չէ տալ: Այնուամենայնիվ, ժամանակադրական քննությունը կարող է բացատրել որոշ տարբերություններ:

Դակերենի և թրակերենի բավական վաղ տարբերակման վերաբերյալ հնագիտական տվյալները դեռևս սպասում են իրենց հայտնագործողին: Տեղին են Ռումինիայի դիտությունների ակադեմիայի աշխատակից Ա. Վուլպեի³ մի քանի դիտողությունները: Պատմականորեն այդ երկու խմբերի միջև եղած տարբերությունները ստույգ վկայված են մ. թ. ա. V դ. և՛ հունական աղբյուրներում, և՛ հռոմեական փաստաթղթերում: Ըստ Վուլպեի նախաթրակները անշատվել են հիմնական հ.-հ. խմբից ամենատուշը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում, նեոլիթից բրոնզե դար ընկած անցումային ժամանակաշրջանում: Սրան հաջորդել է երկու հիմնական խմբերի առաջացումը. հարավային թրակներ (դասական ժամանակների թրակները) և հյուսիսային թրակներ, որոնք հայտնի դարձան իբրև դակեր: Վաղ Hallstatt-ի ժամանակաշրջանում կարպատ-դանուբյան տարածքը սկսում է ցուցաբերել առանձնահատուկ դժեր, որոնցով այն տարբերվում է բալկանյան, հարավային թրակների տարածքից: Սա, իհարկե, դանդաղ պրոցես էր, և Վուլպեն վարանում է ասել, որ այն սկզբունքորեն կարող է թվագրվել XV—V դդ.: Բայց և այնպես, հնագիտական վկայությունները հաստատում են հյուսիսային և հարավային թրակների շատ վաղ միասնությունը, որին հաջորդել է հետդհետե աճող տարբերակման մի դանդաղ շրջան: Լեզվական նյութը, ինչպես նշվել է վերը, թվագրվում է մ. թ. ա. V դ. և ցույց է տալիս հստակ տարբերություններ սլավոնական ժամանակաշրջանում:

Մենք ենթադրում ենք, որ դասական հայերենում կան դակերենի ուղղակի մնացուկներ: Բառային այն նյութը, որ մեջ է բերվում այստեղ, գոյականներ են, որոնք բոլորն էլ վերաբերում են իրերի, առարկաների մի որոշակի դասի. իրեր, որոնք օգտագործում կամ որոնց հանդիպում ենք առօրյա կյանքում, բույսերի անուններ և այլն: Հայերենի՝ դակերենից փոխառյալ բառերը վերացական տերմիններ չեն, ինչպես՝ «խաղաղություն, երջանկություն, բարձրություն» կամ այնպիսի ընդհանուր հասկացություններ, ինչպես՝ «շարժվել, օգնել, խաղալ» և այլն: Դակերեն համապատասխանությունների ներկայացվող ցուցակը բնականաբար փոքր է, քանի որ կան միայն մոտ 60 դակերեն բառային միավորներ, որոնք համեմատաբար վստահելի իմաստներ և ստուգաբանություններ ունեն: Բացի այդ, դակերենի հայտնի բառային միավորների բավական զգալի մասը ունի շատ կասկածելի մեկնաբանություն: Մեր նպատակն է եղել գտնել հայերեն այնպիսի բառեր, որոնց դակերեն համապատասխանությունների բառային արժեքը կասկածի ենթակա չէ:

Ի հավելումն, այստեղ ներկայացվելու են նաև մի շարք հայերեն բառեր, որոնք հարավ-հնդեվրոպական ստույգ համապատասխանություններ ունեն,

³ A. Voolpe, The Cultural Unity of the North Thracian Tribes in the Balkano-Carpathian-Hallstatt („Journal of Indo-European Studies“ 2/1, 1974, p. 1—21).

սակայն դրանք չէին կարող հայերենին անցած լինել ուղղակի նախա-հնդեվ-րոպականից: Հայերեն այդ բառերի անմիջական հնդեվրոպական ծագումը հնարավոր չէ կամ, լավագույն դեպքում, անհավանական է, քանի որ դրանց բաղաձայնական համակարգը շեղվում է հայերենի հնչյունական օրինաչափ փոփոխություններից, բայց դրա փոխարեն ամբողջովին համապատասխանում է գաղերենի հնչյունական զարգացման օրինաչափություններին: Այս քննութ-թյունը չի կարող ղերծ լինել սխալներից, քանի որ որոշ բառերի դակյան ծա-գում ունենալը ենթադրական է, որովհետև այդ բառերի գաղերեն զուգահեռ-ները սլավոնական չեն, և դրանք կարող էին գաղերենի միջոցով անցած չլի-նել հայերենին: Այնուամենայնիվ, քանի որ հնարավոր է կանխագրել հայե-րենում գաղերենից փոխառյալ փոքր թվով բառերի գոյությունը գաղերենի առանց այն էլ քիչ պահպանված բառամիջերից, ապա հավանական է, որ հա-յերենը ունենա գաղերենից փոխառյալ որիշ բառեր էլ, որոնց գաղերեն զու-գահեռները անհետացել են: Այսպիսով, կարող ենք դակյան ծագում առա-ջարկել հայերենի այնպիսի բառային միավորների, որոնց հնչյունափոխու-թյունը շեղվում է հայերենի հնչյունական օրինաչափ փոփոխություններից և ավելի մոտ է գաղերենի հնչյունափոխությանը, չնայած գաղերեն զուգահեռի բացակայությանը:

Նյութի քննությունը բաժանում ենք երկու մասի: Նախապես կփորձենք որոշել անմիջական փոխառությունները, որոնց համապատասխանությունները առկա են և՛ գաղերենում, և՛ հայերենում: Այնուհետև, առաջարկում ենք դակ-յան փոխառյալ ծագում հայերեն որոշ բառերի համար, որոնց գաղերեն հա-մարժեքը պահպանված չէ, սակայն որոնք համապատասխանում են գաղե-րենի հնչյունափոխական կանոններին: Այս վերջին քննության ընթացքում կարող են և սխալներ լինել: Բայց, նույնիսկ Հյուբշմանը և Բենվենիստը հա-յերենի իրանական բաղադրիչների քննության ժամանակ նման մոտեցում են ցուցաբերել: Մի քանի դեպքերում Հյուբշմանը հայերեն բառերի համար իրա-նական ծագում է առաջարկում, ելնելով նրանց հնչյունական տեսքից (er klingl persisch): Նույն ձևով էլ Բենվենիստը⁴ ենթադրում է, որ հայերեն սուրբ բառը կարող է իրանական ծագում ունենալ, չնայած իրանական զու-գահեռը բացակայում է:

Չնայած Հերոդոտը նշում է, որ հայերն իրենցից հետո թողել էին «թրակ-յան» տիպի շիրմաթմբեր, բայց թրակերենի հետքեր հայերենում՝ փոխառյալ բառերի ձևով, չենք գտնում: Ավելին, նյութն առավելապես հակված է գաղե-րենի կողմը: Չնայած հնագետները տարբերակում են դակյան և թրակյան թաղման սովորույթները, անհավանական է թվում, որ Հերոդոտը բավարար չափով ծանոթ լիներ մեկ կամ մյուս հասարակությանը՝ անհրաժեշտ տարբե-րություններ տեսնելու համար: Չնայած գաղերի և թրակների թաղման սովո-րույթների միջև եղած որոշակի տարբերություններին, դրանք ունեին ոչ քիչ նմանություններ, որոնք բավական են, որպեսզի ոչ մասնագետը դրանք նույ-նացնելու: Այսպիսով, Հերոդոտի կողմից այդ շիրմաթմբերը դակյան կամ թրակյան անվանելը կարևոր չէ: Եվ եթե հետևյալ փոխառությունները հա-մարվեն հնարավոր, ապա կարող ենք ենթադրել, որ ավելի հավանական է այդ

⁴ Benveniste, Elements "parthes en arménien" (*Revue des études arméniennes**, № 1, 1964, p. 1—39).

շիրմաթմբերի հյուսիս-թրակյան (դակյան), քան թե հարավ-թրակյան (մաքուր թրակյան) ծագումը:

Այժմ քննենք հայերենի բառային այն միավորները, որոնք ճշգրիտ գուրահեռներ ունեն դակերենում:

1. Դակերեն *-dela* «խոտ, դեղ», հայ. դեղ. «խոտ, դեղ»:

Հայերեն դեղ բառի դակերեն սկզբնաձևերը հանդես են գալիս դեղաբույսեր նշանակող բարդ բառերում, որպես երկրորդ բաղադրիչ. *diodela, ziodela, usazila, usatila*, *δοσώδηλα, τεισώδηλα, περιδών(ι)α*: Ո՛չ Հյուբշմանը, ո՛չ էլ Ջուտան և Ֆրիսկը հայ. դեղ բառին հնդեվրոպական ծագում չեն վերագրում (հակառակ Աճառյանի)⁵։ Աճառյանը դեղ արմատը կապում է դալար-ի հետ և առաջացած համարում հ.-հ. **dhel-* և *dhēl-* ձևերից: Սա չի կարող ընդունելի համարվել, քանի որ ոչ մի կերպ չի բացատրվում դալար-ի լ-ի դիմաց դեղ-ի դ-ի առկայությունը: Ֆրիսկը⁶ իրավացիորեն նկատում է, որ հայերեն ետնալեզվային դ-ն պետք է առաջացած լինի բաղաձայնական այնպիսի կապակցություններից, ինչպիսիք են՝ **l̥n* կամ **ls*: Այսպիսով, այն դեպքերում, երբ հայերենում բառավերջում ունենք հնդեվրոպական ծագման դ, ապա պետք է ենթադրել նախնական **l̥C* (*լ*+բաղաձայն). օրինակ՝ աղ, հ.-հ. **sals*: Հետևաբար, պարզվում է, որ հ.-հ. **dhel-*ից «ծաղկել, կանաչել» դալար-ի (**dhēl-*) առաջացումը հավանական է, իսկ դեղ-ինը՝ ոչ:

Գեորգիևը⁷ դակերեն *-dela*-ն առաջացած է համարում հ.-հ. **g'hel-*ից⁸. հուն. *γλήη* «կանաչ տերևներ, բույսի թարմ բողբոջներ, ծիլեր», հեկսւլ. *zelje* «կանաչ, կանաչեղեն», լատ. *helus* «կաղամբ» և հավանաբար նաև փոյուզերեն *ἑλχα* «կաղամբ»: Այսպիսով, հավանական է, որ հայերեն բառի նախնական իմաստը եղել է «խոտ, բույս», ավելի ուշ՝ «դեղ»: Սա ակնհայտ է դառնում այնպիսի բարդությունից, ինչպես դեղդալար «խոտ, խոտեղեն, կանաչ խոտ»: Ինչևէ. որ բույսերը (**g'hel-*) հանդես են եկել որպես արժեքավոր բուժամիջոց, երևում է բարդությունների առաջին անդամից՝ *dio-*, *zlo-*, *δοσώ-*, *τεισ-* որոնք, ամենայն հավանականությամբ, կապվում են լատ. *deus* «աստված» բառի հետ: Այստեղից՝ *diodela* «աստվածային բույս, գերազանցապես՝ դեղ»:

usa- (*usazila*)-ի և *πρία-* (*πρία-διν(ι)α*)-ի ստուգաբանությունները հայտնի չեն:

Այսպիսով, հայ. դեղ-ը, ունենալով կրկնակի իմաստ («խոտ» և «դեղ») սերտորեն համապատասխանում է դակերեն *dela*, հ.-հ. **g'helā*-ին և՛ իմաստով, և՛ հնչյունապես:

2. Դակերեն *διελίνα*, *dielina* «բաց գույն ունեցող բույս», հայ. դեղին:

Դակերեն *διελίνα*-ի բառային իմաստը միանգամայն պարզ է, սակայն

⁵ 2. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ 2ԱԲ), հ. I, Երևան, 1971, էջ 649:

⁶ H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch I, p. 483; Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 182.

⁷ Introduzione, p. 140—141.

⁸ Հ.-հ. **g'h-* և **g-* ի փոփոխությունների մասին տե՛ս հայ. քերականության ժամանակ (տողառակ 18):

տարակարծություններ կան ստուգաբանության վերաբերյալ: Գեորգիեր⁹ գակերենի բառակազմի *d-*-ն (բավական հազվագեպ) բխեցնում է *հ.-հ.* **bh-*ից, համեմատելով դակ. *ḍiṣṭiṣiṣi*-ն բուլղ. *biṣan*, հեկս. *bēlā*, *հ.-հ.* **bhel-*, գերմ. *Bilsenkraut* «մոլիսխիդ, բանդ», գալլ. *βελανδίναι*: Դեշեր¹⁰ դակերեն *ḍiṣṭiṣiṣi*-ն ծագած է համարում *հ.-հ.* **dhel-*ից, «թուլլ, աղուտ լույս» և ողղակիորեն համեմատում է հայ. դեղին բառի հետ:

Եթե Դեշերի առաջարկած ստուգաբանությունը թույլ է իմաստային առումով, ապա Գեորգիերը՝ այդ առումով անհերքելի է. հենվում է *b/d* հնչյունափոխության վրա, որը դակերենում չի հանդիպում: Մեր կարծիքով, առաջարկված ստուգաբանություններից ոչ մեկն էլ ճիշտ չէ: Անհավանական է, որ հայ. դեղին-ը կարող է առաջացած լինել դակերեն *ḍiṣṭiṣiṣi*-ից փոխառության միջոցով, քանի որ ածականի փոխառությունը անսովոր է: Դեշերի ստուգաբանությունը *հ.-հ.* **dhel-*ից հանգեցնում է նույն պորբլեմին (1-ի դիմաց 1), որին անդրադարձանք վերը՝ դեղ բառի քննության ժամանակ: Ամենից հավանականն այն է, որ հայ. դեղին-ը առաջացել է հայ. դեղ-ից՝ ածանցումով. ինչն ածանցը ընդհանրապես գոյականներից կազմում է ածականներ. զուգահեռ կազմություններ են դիւր-դիւրին և մութ-մթին:

Այսպիսով, հայ. դեղին-ը ոչ փոխառություն է դակերեն *ḍiṣṭiṣiṣi*-ից, ոչ էլ անմիջականորեն բխում է *հ.-հ.* **dhel-*ից: Ավելին, այն ունի զուտ հայկական կազմություն, կանոնավոր ձևով կազմված ածականակերտ ինչն ածանցով. դակերեն *dela* > հայ. դեղ- > դեղին:

3. Դակերեն *dru-* «փայտ», հայ. դրուագ «զարդաքանդակ»: Գեորգիեր¹¹ բերում է *Δροβηταί* և *Drobetae* տեղանունները, ունիներեն *druete* < **druvete* «փայտ», ալբ. *drulë* (հզն.) «փայտեք, ծառեր»: Այլ կերպ ասած՝ այն կապվում է հուն. *δρῦν-δρῦσιν*, գոթ. *triu-*, *հ.-հ.* **drewo-*ի հետ: Հայ. դրուագ-ը հանդես է գալիս նաև լրացուցիչ ածանցումով՝ դրուագիչ: -ագ ածանցը, որպես գոյականակերտ, հայերենում համեմատաբար ավելի հազվագեպ է. լավագույն օրինակ է փափագ-ը, փափ-ուկ հիմքից (տե՛ս նաև փափկ-ասեք): Դրուագիչ-ի ինչ-ը գործող անձ ցույց տվող տարածված ածանց է. երգ-երգիչ: Հայերեն դրուագ-ը չի կարող անմիջական հնդեվրոպական ծագում ունենալ, քանի որ *հ.-հ.* **dru-*ն հայերենում կտար **triu-*: Ածանցավոր կազմություն ունեցող դրուագ-ը, այսպիսով, կարող էր դակյան ծագում ունենալ: Այնուհետև, -ագ ածանցը չպետք է համեմատել փափագ-ի -ագ-ի հետ, այն ավելի շուտ ծագել է *հ.-հ.* **ag* գոյականակերտ ածանցից, անմիջականորեն գալով դակերեն **druag-*ից:

Հայերենում կա դուր «հյուսնի գործիք» գոյականը, բայց այս բառը Աճառյանը¹² կապում է նպրսկ. *durāy* (دُرَاي) «խարտոց» բառի հետ: Դրուագ բառը հայ. դուր-ից առաջացած լինել չէր կարող, քանի որ դասական հայերենում չունենք -ուագ ածանց:

4. Դակերեն *ḍūn* «եղինչ (*urtica*)», հայ. դուռն «մի տեսակ մուրախոտ» (*cyperus*):

⁹ Introduzione, p. 141.

¹⁰ Detschev, Die thrakischen Sprachreste, Vien, 1956, S. 546.

¹¹ В. Л. Георгиев, Zbornik za filologiju i lingvistiku, Novi Sad, 1961—62, p. 85; Introduzione, p. 143, 166.

¹² ՀԱԲ, հ. I, էջ 687.

Դակերենի ծննդը ավանդաբար առաջացած է համարվում հ.-ե. **du-ni* «այրող բույս» շեղոք դերբայից (հմտ. սնսկր. *duhoti*)։ «Եղինջ» բույսը լատիններենում կոչվում է *urtica*՝ ՁԲՈ «այրել» բառից։ Գերմ. նույնպես *Brennessel* «եղինջ» *brennen* «այրել» բառից է։ Այսպիսով, դակերեն ծննդը սկզբնապես այդպես է կոչվել բույսի ցողունի վրայի փոքրիկ փշերի այրող հատկության պատճառով։

Հնչյունական համապատասխանությունը ճշգրիտ է։ Իմաստային կապերը նույնպես բավարար են նման ստուգաբանությունը հնարավոր համարելու։ Դակերեն ծնն կ հայ. դուռ բույսերը ունեն մոտավորապես նույն բարձրությունը՝ 30—40 սմ։ Հայ. դուռ-ը բոշխի նման մի բույս է, ունի բաղմամբիվ ցողուններ և սրանով էլ տարբերվում է դակյան ծնն-ից. որը սովորաբար սենեկում է միայն մեկ ցողուն՝ իր տերեւներով։ Երկուսն էլ կանաչ գույն ունեն։ Ծնն-ը դիմացկուն բույս է և կարող է աճել թե՛ չոր, թե՛ խոնավ հողում։ Դուռն նույնպես լավ աճող բույս է, բայց աճում է միայն զետափերի ճահճային կամ խոնավ վայրերում և ճահճներում։ Հատկանշական է, որ երկու բույսերն էլ օգտագործվում են թեյի և ապուրների համար։ Հիմնականում օգտակար են ծնն-ի տերեւները, մինչդեռ դուռի փոքրիկ, հատկանման պտուղներն են օգտագործվում թեյի համար։ Հետաքրքրական է, որ երկու բույսերն էլ ունեն բուժիչ հատկություն։ Ասում են, որ ծնն-ը օգտակար է երկկամների համար, իսկ դուռը՝ լյարդի։ Դուռի ցողունը օգտագործում են աղցանների համար¹³։

5. Դակերեն *arden* «նիզակ» (ռում. *andrea*), հայ. առղն։ Այս ստուգաբանությունը առաջարկել է Ռայխենկրոնը¹⁴ իր ժամանակակից ռումիներենի դակյան տարրերին նվիրված մենագրության մեջ։ Ռայխենկրոնի մոտեցումը միակն է իր տեսակի մեջ. նա ռումիներեն բառապաշարից առանձնացնում է 130 արմատ, որոնք սլավոնական կամ լատինական ծագում չունեն, բայց որոնց տեսքը հնդեվրոպական է։ Այնուհետև նա ապացույցներ է բերում, որ այդ 130 բառերը դակերեն անհետացած բառերի հետքերն են և սահմանում է տեղի ունեցած հնչյունափոխությունները, ցուցաբերում է համակարգային մոտեցում։ Բաղմամբիվ դեպքերում բերված ստուգաբանությունները բռնազբոսիկ են, թեև մեծ մասամբ նա խոստովանում է այդ։

Հայերեն առղն բառը ավանդաբար ցեղակից է համարվել հ.-ե. **ardh-*ին, որի ցեղակիցներն են լիթ. *ardas* «նիզակ», ռուս. *arda*։ Ֆամսերը¹⁵, սակայն, ցույց է տվել, որ ռուս. *arda*-ն փոխառյալ է կարելիքներից կամ ֆիններենից, և որ լիթ. *ardas*-ը ուղղակիորեն առաջացել է ռուսերենից։ Հետևաբար, դրանցից ոչ մեկն էլ չի կարող կապվել հայ. առղն-ի հետ, չնայած թյուրիմացու-

¹³ Համապատասխանությունների նշանակությունը նվազում է այն պատճառով, որ դուռը հայերենում գրանցվել է ոչ շրջանում, սկզբնապես Մշո բարբառում։ Այնուամենայնիվ, սա այնքան էլ չի հակասում մեր ստուգաբանությանը, քանի որ հաճախ բարբառներում էլ են պահպանված լինում հին բառեր։

Մեզ ցույց տված օգնության և՛ *urtica*-ի և՛ *cyperus*-ի մասին հազորդած տեղեկությունները համար շնորհակալություն ենք հայտնում Երևանի համալսարանի աշխատակից, պրոֆ. Ա. Գ. Մեխրյանին։

¹⁴ G. Reichenkron, Das Dakische, Heidelberg, 1966, p. 84—85.

¹⁵ M. Vasmer, Russisches etymologisches Wörterbuch, Bd. 1, Heidelberg, 1953, S. 23.

Բյան տեղիք տվող հնչյունական նմանության առկայությանը: Այստեղից, հակերեն *arden* (>ռում. *andrea*) և հայ. արդե ունեն ընդհատված ցեղակցություն: Հնդեվրոպական լեզուների տվյալների պակասի պատճառով ավելի հավանական է թվում ենթադրել դակերեն-հայերեն փոխառություն, քան թե վերականգնել հնդեվրոպական նախաձև մի բառի համար, որն ունի այդքան նեղ բաշխում:

Վերը քննվեցին հինգ հայերեն բառեր, որոնք զուգահեռներ ունեն դակերենում (կամ ռումիներենում): Հայերեն հետևյալ բառերը չունեն դակերեն համապատասխանություններ: Այնուամենայնիվ, հնչյունական պատկերի, ինչպես նաև այլ հանգամանքների պատճառով, հավանական է դրանք դակերենից փոխառյալ համարելը, թեև դակերեն համապատասխանություններ չեն պահպանվել:

1. Հայ. բերդ, դակ. **berd*.


Հյուբշմանը¹⁶ բերում է այս բառը և միայն ասում, որ այն չի կապվում ասորական *merda* «ամրոց» բառի հետ: Աճառյանը¹⁷ նշում է ասորերեն *bī-ir-tī* ձևը: Հյուբշմանի կարծիքը, որ այն չի կապվում ասորական *merda*-ի հետ, անկասկած ճիշտ է: Աճառյանի՝ ասորերեն *bī-ir-tī*-ի փոխառություն համարելը թերևս ընդունելի չէ: Չնայած արևելասեմական ծագում ունեցող մի քանի բառեր իրոք հանդես են գալիս հայերենում, բայց ավելի հավանական է, որ դրանք անմիջականորեն չեն անցել հայերենին, այլ, հավանաբար, խեթերենի միջնորդությամբ. օրինակ՝ հայ. բարգմանել, խեթ. *tarkuwai*, ակկ. *turgu-mannu*:

Այս դեպքում, ընդունելով հ.-ե. **g'h*-ի և **g'*-ի անցումը դակ. *d'*-ի¹⁸, կարելի է ենթադրել, որ հայ. բերդը դակերենի միջնորդությամբ ուղղակիորեն կապվում է հուն. *πύργος* «աշտարակ, պարիսպ» բառի հետ: Հունարեն *πύργος*-ի, որի համար ենթադրվում է պելասգյան ծագում, և գերմ. *burg* «քաղաք» բառի ցեղակցության հարցը բավական շատ է քննարկվել: Հեսիքիոսի մոտ այն հանդես է գալիս որպես *πύργος τεῖχος* («պատ»), *φ<ο>ύργος*, *ὄχυρα* («ամրոց»): **bherg'h*- նախաձևը տարնմանությամբ դառնում է **bɛrg'h*: Այնուհետև հաջորդում է ձայնեղ>խուլ (>շնչեղ-խուլ) հնչյունափոխությունը (տեղաշարժը), որը գոյություն ունի նաև գերմանական լեզուներում և հայերենում. **bɛrg'h*->**pɛrg*:- Հետագա **ɾ>llɾ* անցումով ստանում ենք *purg*, հուն. *πύργος*, նույն ձևով էլ **bherg'h*-ից առաջացել է դակ. **berd*-ը,

¹⁶ H. Hübschmann, Armenische Grammatik, Germany, 1972, S. 301.

¹⁷ ՀԱԲ, հ. 1, էջ 442:

¹⁸ Աս, իրոք, շատ հետաքրքիր հնչյունափոխություն է: Չնայած հունարեն տառադարձությունը ցույց է տալիս *h'* ծ, *h'* չ, հավանական է, որ *h*-ն ավելի հարմար արտացոլում է Անկասկած հ.-ե. **g'h* և **g'* տվել է (**θ*) և ապա՝ *z*: Այնուամենայնիվ, *d* կամ *dh* արտացոլումը ավելի հատուկ է ալբաներենին: Այն, որ *d*-ին հաջորդել է *z* անցումը, պարզ է դառնում օրում. *māzāre* օրում, ալբաներեն *modhulil*, հ.-ե. **mad*: Այսպիսով՝



որն իր հերթին փոխ է առնվել հայերենում հնչյունական նույն տեղում և նշանակությամբ:

Ավելի հեռավոր ցեղակից լատ. *burgus*-ը հավանաբար գերմանական փոխառություն է¹⁹, Կրեյմերը²⁰ **bherg*-ի արմատին վերագրում է հյուսիս-բալկանյան ծագում, և հավանաբար հնդեվրոպականին ոչ ցեղակից, Գերմանական համապատասխանությունը, հետևապես, գիտվում է որպես ուղղակի փոխառություն, այլ ոչ թե ծագումնաբանորեն ցեղակից:

2. Հայ. գրէ, գրեայ, «կռունկ», դակ. **gēr* (նույն նշանակությամբ). հնդեվրոպական **ger*-ը «կռունկ» հայերենում օրինաչափորեն տալիս է կռունկ և նրա ցեղակիցն է հուն. γέρων, γέρανος «կռունկ», գալլ. *tri-garanos*, լիթ. *garnys*, լատ. *grus* «կռունկ»: Այնուամենայնիվ, հայ. գրէ-ն չի կարող հնդեվրոպական նախաձևի ուղղակի ժառանգը լինել, քանի որ այն շեղվում է հայերենին հատուկ հնչյունական օրինաչափ փոփոխություններից: Այսպիսով, հնարավոր է, որ հայ. գրէ-ն առաջացել է այժմ արդեն անհետացած դակերեն **gēr* «կռունկ» < հ.-հ. **gr-* ձևից: Կարելի է առարկել, որ հայ. գրէ, գրեայ իր ածանցներով սերտորեն համապատասխանում է իրանական ծագում ունեցող բազլ, բազայ բառերին, և կարելի էր դրանք իրանական համարել: Պետք է նշել, սակայն, որ հ.-հ. **ger-* արմատը հնդիրանականում որպես թռչնի անուն հանդես չի գալիս, ավելին, պարզվում է, որ այն ներկայացված է սկր. *grāṇī* «երգել» ձևով: Շպինտը²¹ անում է մի քանի լրացուցիչ դիտողություններ հոլովական կաղապարների մասին:

3. Հայ. տռուն «շեղջ, կույտ, դեզ», դակ. **ter-* Զահուկյանը²² նշում է հայ. տռուն և հուն. τῆρος «կույտ, դեզ» անուղղակի կապը հ.-հ. **tero-* «հետ, չուն» հուն. τῆρος-ը վկայված չէ Հոմերոսի մոտ, բայց հանդիպում է Հեսիոդոսի և, ավելի սակավ, ուշ հեղինակների մոտ: Ընդհանուր առմամբ այն ունի ցածր հաճախականություն: Ֆրիսկը²³ առաջարկում է հնարավոր ցեղակցություն տերտերո-ի «ավելի մեծ գավաթ» հետ, բայց ավելացնում է, որ կապը պարզ չէ: Այս բառը, բացի հայերեն տռուն բառի հետ ունեցած հնարավոր ցեղակցությունից, այլ համապատասխանություններ չունի: Այսպիսով, հուն. τῆρος-ը պեղսոգյան կամ նախաբալկանյան արմատ համարելը լիովին ընդունելի է:

4. Հայ. տրոբել, գակ. **ter-*:

Գ. Զահուկյանը²⁴ հայերեն տրոբել-ը անուղղակիորեն կապում է հուն. τριβ-ի «ճմլել, ուժեղ տրորել» (հ.-հ. **ter-y-*) հետ: Մինչև այժմ հունարեն τριβ-ը բառի համար չէր նշված համապատասխանություն այլ լեզուներում: Շպինտի առաջարկությամբ հուն. τριβ-ն կարող է կապվել հուն. τριβ-ի հետ՝ **tri-* արմատից: Այս բառի՝ Շպինտի²⁵ առաջարկած լրացուցիչ ցեղակիցներն են լատ. *tri-vi, detri-mentum* և թոխ. ԱՖ *triv*: Ընդհանուր առմամբ

¹⁹ J. Vendryes, De hibernis vocabulis, quae in Latina lingua originem duxerunt, Paris, 1902, p. 117, 200.

²⁰ „Glotta“, հ. 22, էջ 100 և հետ.

²¹ F. Specht, Der Ursprung der idg. Deklination, Göttingen, 1944, S. 127, 161.

²² Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, стр. 136.

²³ H. Frisk, նշվ. աշխ., էջ 843:

²⁴ Г. Б. Джаукян, նշվ. աշխ., էջ 136:

²⁵ „Kuhns Zeitschrift für vergleichende Sprachforschung“, Bd. 66, S. 212:

հուն. *τεῖρω-ի* և *τριβω-ի* կապը քիչ է հավանական: Հետագա ցեղակցությունը լատ. *tril-տի-*ի հետ բավական մտահայեցողական է: Հստ էության, շատ քիչ է հավաստի հուն. *τεῖρω-ին* հնդեվրոպական ծագում վերագրելը: Այս դեպքում ևս ավելի հավանական է թվում բալկանյան կամ պելասգյան ծագումը, իսկ հայերեն բառը հավանորեն կարող է դակյան ծագում ունենալ: Զահուկյանը ցույց է տալիս, որ հայերեն *տրեբիլ-ը* ծագել է ավելի նախնական **տիր-որ-ել-ից*, *Տրեբիլ-ի -որ-ը* զուգահեռ է *գլոբիլ-ի -որ-ին* (*գլեմ-ից* հ.-և. **wel-*):

5. Հայ. պար «պար, շրջան, գալար», դակ. **par-*:

Հայերեն պար-ի հիմնական նշանակությունն է «պտույտ, գալար, շրջան» և հանդես է գալիս այնպիսի բարդություններում, ինչպիսիք են հայ. *պարագայ*, *պարագայութիւն* և *պարան*: Զահուկյանը հայ. *պար-ը* երկրորդաբար կապում է հուն. *σπειραμα-ի՝* «գալար» հետ²⁶. հուն. *σπειρα* նույնպես նշանակում է «պարան, օղակ»: Այնուհետև, հուն. *σπειρα-ն* ունի և այլ նշանակություն՝ «մարդու մարմինը մինչև բազուկները»: Այստեղից էլ հունարեն բառի «պարան» և «օղակ, օղ» երկու իմաստներն էլ ճշգրտորեն զուգահեռ են հայ. *պար-ի* իմաստներին:

Հնդեվրոպական մյուս լեզուներում հուն. *σπειρα-ն* համապատասխանություններ չունի և կարող է պատահել, որ այն պելասգյան կամ բալկանյան ծագում ունենա: Եթե այն բալկանյան է, ապա հայ. *պար-ը* կարող է փոխառյալ լինել դակերենից:

6. Հայ. տալ-աւոր «փոքր սկուտեղ, ափսե», դակ. **tal-*:

Հայերեն տալաւոր բառը կարող է կապվել²⁷ (ոչ ծագումնաբանորեն) հ.-հ. **tel-* «տափակ, տափակ իր» արմատի հետ, որը առկա է հունարենում *τέλα* «մաղի բոլորակ, լաստակ, տեփուր» և սանսկրիտում *talam* «հարթ (մակերես)»: Աւոր ածանցով սովորաբար կազմվում են գործող անձ ցույց տվող գոյականներ (*nomina agentis*). հմմտ. հայ. *գանձաւոր* և *դաւաւոր*:

Հուն. *τέλα-ի* և սկր. *talam-ի* կապը կարող է բռնազբոսիկ լինել: Հավանական է, որ հուն. *τέλα-ն* բնիկ միջերկրածովյան բառ է և որ հայերենը տալ- հիմքը փոխ է առել դակերենից՝ **tāl-*: Սակայն, հայ. *լ-ն*, ինչպես և *դ-ն*, դժվար բացատրելի է:

7. Հայ. կուր «1. վնասակար միջատ, 2. նավակ, մակույկ», դակ. **kur-*:

Լիդենը²⁸ նշում է սրա կապը հուն. *κόρις* «միջատ» (*cimex lectularius*) բառի հետ: Հուն. *κόρις-ը* օգտագործվում է նաև որպես ձկան անուն, որը լրացուցիչ զուգահեռ է հայ. *կուր-ի* «մակույկ» նշանակությանը: Հունարեն *κόρις-ին* ծագումնաբանորեն ցեղակից կարող է լինել ռուս. *кōpъ* «ցեց» բառը: Քանի որ հայ. *կուր* բառը շեղվում է հայերենի բաղաձայնների օրինաչափ փոփոխություններից, այն պետք է համարել փոխառյալ:

Քննենք մի բառ ևս: Հայ. *արա* բառը հաճախ նշվել է հուն. *ἄρρος*, սկր. *āra-* բառերի հետ նույն շարքում: Սակայն հայերենում սպասվող *ց-ի* փոխարեն *ա-ի* առկայությունը երբեք բավարար չափով չի բացատրվել: Մենք

²⁶ Г. Б. Д ж а у к я н, նշվ. աշխ., էջ 130:

²⁷ նույն տեղում, էջ 132:

²⁸ E. Lidén, Armentische Studien, Göttingen. 1906, S. 82.

ևս չենք կարող առաջարկել որևէ բացատրություն դակերենի միջոցով, քանի որ դակերենի հնչյունափոխությունը այդ հնարավորությունը չի բնօրոգում:

Այն հարցը, թե երբ է տեղի ունեցել հայերենի բաղաձայնական տեղաշարժը, վճռական նշանակություն ունի դակերեն-հայերեն փոխառությունների վարկածի համար: Ջահուկյանը²⁹, հենվելով հայերենում խեթերենից փոխառյալ բառերի առկայության փաստի վրա, իրավացիորեն նշում է, որ տեղաշարժը պետք է տեղի ունեցած լիներ հայերենի կողմից խեթական բառանյութը յուրացնելուց առաջ:

ОПЫТ ИЗУЧЕНИЯ ЭЛЕМЕНТОВ ДАКСКОГО ЯЗЫКА В КЛАССИЧЕСКОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ДЖОН А. К. ГРЕППИН (США)

Резюме

Одной из важнейших задач сравнительного изучения армянского языка является решение вопроса происхождения слов древнеармянского языка, восходящих к и.-е. языку, но не относящихся к исконно лексическому слою.

В результате исследования происхождения некоторых из них можно объяснить как результат дакского влияния на армянский язык: *berd* «крепость», *grēay* (*grē*) «журавль», *tufn* «куча», *trōrel* «тереть», *paḡ* «танец, круг», *talawor* «блюдо, тарелка», *kur* «1. вид вредного насекомого; 2. лодка».

²⁹ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1979, էջ 187: